ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՄՍՆ << ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԱՎԱԳ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ
ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ ՈՒՍՈՒՑՉԻ ԿՈՂՄԻՑ ՆԱԽԱՅԲԲԵՆԱԿԱՆ ՓՈՒԼԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ

ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ՝ ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀԱՍՄԻԿ ԲԵՅԲՈՒԹՅԱՆ

ՈՒՍՈՒՑԻՉ՝ ԼՈՒՍԻՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԴՊՐՈՑ՝ ՁՈՒԼԱՔԱՐԻ Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 2 ՄԻՋՆԱԿԱՐԳ

2022

ՄԱՐՏՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.Ներածություն……..

2.Գրական ակնարկ……

3.Փորցարարական հետազոտություն…….

4.Վերլուծություն……

5.Գրականության ցանկ…….

6.Հավելված……

Դասապլան-1

Դասապլան-2……

Ներածություն

Նախաայբբենական շրջանի հիմնական նպատակը աշակերտներին կարդալուն և գրելուն նախապատրաստելն է՝ ինչպես գործնականորեն, այնպես էլ հոգեբանորեն ու ֆիզիկապես, իսկ այդ նպատակներին հասնելու ուղիները պետք է իրականացնել վարժությունների, առաջադրանքների, դիդակտիկ և հետաքրքրաշարժ խաղերի միջոցով՝ զարգացնելով նրանց հմտություններն ու կարողությունները: Այստեղ շատ կարևոր է ուսուցչի դերը: ՈՒսուցիչն իր ունեցած գիտելիքները, կարողություններն ու հմտությունները հաղորդելով աշակերտներին՝ պետք է պարբերաբար համալրի իր գիտելիքները, լինի խորագիտակ, ստեղծագործող, որոնող, պրպտող, զբաղվի ինքնակրթությամբ: Ֆրանսիացի փիլիսոփա Մ.Մոնտեն գրում է.<<ՈՒրիշին սվորեցնելու համար պահանջվում է ավելի շատ խելք, քան երբ ինքդ ես սովորում>>:

Նախաայբբենական փուլի կազմակերպման բարդությունները կապված են աշակերտների խոսքի զարգացման, տեսողության, լսողության, զգացողության և ուշադրության մշակման հետ, գրելու համար՝ ձեռքի նախապատրաստմանը, կարդալու սկզբնական կարողության ձևավորման համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծման հետ, աշխարհաճանաչողական տարրական տեղեկությունների հաղորդման և այլ աշխատանքների հետ:

Դասաժամն արդյունավետ դարձնելու, երեխաների մեջ հետաքրքրություն առաջացնելու նպատակով շատ կարևոր է օրվա դասի պլանավորումը, որն ուսուցչի համար ունի ուղղորդող նշանակություն, ինչպես նաև ժամանակակից մեթոդների կիրառումը, որը ենթադրում է ուսուցչի և աշակերտների համագործակցությունը ուսուցման գործընթացում, որի արդյունքում աշակերտը յուրացնում է գիտելիքներ, ձևավորում է կարողություններ, հմտություններ:

Ինչպես գիտենք Մայրենի առարկայի ուսուցումն ունի գործնական ուղղվածություն, ուստի ուսուցման ժամանակ նպատակահարմար է կիրառել գործնական մեթոդներ, որն իր մեջ ներառում է ուսումնաարտադրական աշխատանքը, ինչպես նաև զննական մեթոդները, որի մեջ մտնում է

իլյուստրացիան, դեմոնստրացիան, աշակերտների ուսումնասիրությունները և այլն:

Նախաայբբենական փուլի իրականացման ուղիներից մեկն էլ խաղն է՝ որպես ուսուցման մեթոդ: Ըստ հոգեբանական ուսումնասիրությունների մարդուն հատուկ են բազմաթիվ և բազմապիսի ակտիվություններ: Նախադպրոցական տարիքի երեխաներին հատուկ հիմնական ակտիվություն համարվում է խաղը: Փաստ է նաև , որ ամեն տարիքում ակտիվության մի ձևը լինում է հիմնական, գերակշռող: Կրտսեր դպրոցական տարիքի երեխաների համար միշտ էլ կարևորել են խաղի դերն ու նշանակությունը անձի զարգացման և ձևավորման համար: Նախաայբբենակն բաժինը կառուցված է այնպես, որ երեխաների մեջ արթնացնի սեր նախնառաջ գրքի նկատմամբ, դպրոցի, հաճույքով կատարի դասագրքի բազմաբնույթ առաջադրանքները, գիտակցի և գնահատի սովորելու կարևոր լինելը, քանի որ նախաայբբենական շրջանի հիմնական նպատակը աշակերտին գրաճանաչ դարձնելն է: Դրան նպաստում է Այբբենարան-ում տրված թեմատիկ, առարկայական և բառ-նկարները, որոնք աշակերտներին գաղափար են տալիս խոսքի կամ ամբողջական պատմության, նախադասության ու բառերի մասին՝ այդ լեզվական անվանումները կապելով կոնկրետ հասկացությունների յուրացման հետ, որպեսզի դրանցից յուրաքանչյուրը որոշակի բովանդակություն ու իմաստ ստանա և հեշտությամբ մտապահվի: Առանձնապես օգտակար են նախադասությունները բառերի բաժանելու, առաջադրված բառերով նախադասություններ կազմելու , ինքնուրույն կերպով նախադասություններ կազմելը: Նախաայբբենական փուլի կազմակերպման նպատակային առաջին գործողությունը երեխաների ուշադրության կենտրոնացմանը միտված վարժությունների կազմակերպումն է, ընդ որում պետք է երեխաներին առաջադրել նախ հեշտ վարժություններ՝ աստիճանաբար այն բարդացնելով՝ կիրառելով ինդուկտիվ- դեդուկտիվ մեթոդը: Ստորև ներկայացնենք մի խումբ խաղեր.

Կազմել զույգեր: Այս վարժությունը միտված է կենտրոնացնել ուշադրությունը : Երեխային առաջարկվում են տարբեր պատկերներ, որոնցից նա պետք է ընտրի այնպիսի պատկերներ, որոնք ճիշտ տեղադրելով՝ համընկնեն միմյանց հետ և ստանա համապատասխան պատկերը:

Մեկն ավելորդ է: Այս խաղը նպաստում է ոչ միայն ուշադրության զարգացմանը , այլև մտածողության և հիշողության: Օրինակ՝ նկարված են մի քանի առարկաներ, երեխան ըստ հատկանիշի պետք է ընտրի <<ավելորդ>> առարկան (մրգեր, գրքեր, գրենական պիտույքներ):

Գտիր սխալը: Առաջադրանքը նպաստում է ուշադրության և մտածողության զարգացմանը:Երեխային առաջարկվում է երկրաչափական պատկերներից կազմված եռյակներ՝ դասավորված օրինաչափորեն, աշակերտը պետք է գտնի այն եռյակը, որը չի համապատասխանում օրինաչափությանը:

Այս փուլից հետո պետք է սահուն անցում կատարել պատմություն հորինելու , պատմելու փուլին: Տարբեր նկարների շուրջ երեխաներն ուսուցչի հարցերի օգնությամբ պետք է պատմություններ հորինեն, վերարտադրեն իրենց ունկնդրած փոքրիկ պատմվածքներն ու հեքիաթները: Այս կարողություններին հմտանալուց հետո կարելի է գաղափար տալ գծապատկերի մասին:Այս փուլի նպատակի իրականացման համար կարելի է կիրառել տարաբնույթ վարժություններ: Նշենք մի քանիսը:

Հորինիր ինքդ: Այս վարժությունը նպաստում է աշակերտների տրամաբանական մտածողության զարգացմանը , ինչպես նաև նպաստում է բառապաշարի հարստացմանը: ՈՒսուցիչը ցուցադրված թեմատիկ նկարի շուրջ հորինում է պատմություն, իսկ պատմության ավարտը հանձնարարում է հորինել աշակերտներին:

Դրվագների խառնաշփոթ: Այս վարժությունը արդյունավետ է կրտսեր դպրոցականիիմացական ակտիվության խթանման, ինչպես նաև մտածողության զարգացման համար: ՈՒսուցիչը ցուցադրում է թեմատիկ նկարը , իսկ աշակերտները պետք է կարողանան դրվագները դասավորել դեպքերի կամ

գործողությունների ճիշտ հաջորդականությամբ: Զարգացնելով երեխաների հմտություններն ու կարողությունները պատմություն հորինելու շուրջ՝ նրանց պետք է սովորեցնել պատմությունից առանձնացնել նախադասությունը, ծանոթացնել նախադասության գծապատկերին: Բնականաբար երեխաների համար միանգամից դժվար է զգալ պատմության կազմի մեջ մտնող նախադասությունների սահմանները:Այդ կարողության մշակման համար ուսուցչի հյուսած պատմությունը պետք է լինի պարզ, ընկալելի ոճով, կազմված լինի 3-4 նախադասություններից, իսկ նախադասություններն էլ իրենց հերթին կազմված լինեն 2-3 բառից, նախադասության կազմի մեջ մտնող բառերը վերցված լինեն երեխաների ակտիվ բառապաշարից:

Նրանց գիտակցությանը պետք է հասցնել այն, որ նախադասությունը միտք է արտահայտում, հակառակ դեպքում մենք ոչինչ չենք հասկանա: Սկզբնական շրջանում պատմությունից նախադասությունների առանձնացումը կարելի է կատարել ծափերի միջոցով:

Պատմության մեջ նախադասության քանակը որոշելուց հետո կարելի է գծել գծապատկերը՝ նշելով, որ գծապատկերի սկիզբը մի փոքր հոծ գծով և բարձր է տրվում . դա նշանակում է, որ նախադասությունը սկսում ենք մեծատառով, այնուհետև երեխաների ուշադրությունը պետք է հրավիրել նախադասության գծապատկերի վերջում դրված երկու կետին, բացատրել, որ այդտեղ ավարտվում է միտքը, իսկ երկու կետերին կանվանենք վերջակետ: ՈՒսուցիչը ուշադրության է հրավիրում նախադասության արտասանության ելևէջների վրա և ցույց է տալիս նախադասության սկիզբն ու վերջը՝ ըստ համապատասխան պայմանական նշանների:

Նման դեպքերում կարելի է կիրառել հետևյալ վարժությունները.

Առանձնացնել դրվագները: Այս առաջադրանքը վարժեցնում է պատմությունից նախադասությունն առանձնացնելու կարողության զարգացմանը : Աշակերտները թեմատիկ նկարի շուրջ հորինում են պատմություն, այնուհետև ըստ դրվագների պատմությունից առանձնացնում են նախադասությունները ընտրել

համապատասխան գծապատկերը: Այս առաջադրանքը ներկայացնում է համադրելու, հակադրելու և մտավոր գործողություն ծավալելուն: ՈՒսուցիչը գծում է մի քանի գծապատկերներ, այնուհետև պատմում է մի պատմություն (նպատակահարմար է, որ կազմված լինի 3-4 նախադասություններից): Աշակերտները, որոշելով պատմության մեջ նախադասությունների քանակը, ընտրում են համապատասխան գծապատկերը:

Գտնել ճիշտ հերթականությունը: Այս վարժությունը կարծես թե նախորդի տրամաբանական շարունակությունը լինի: ՈՒսուցիչը կարդում է 2-3 նախադասություններից կազմված պատմություն, որտեղ նախադասությունների հերթականությունը խառնված է: Երեխաները պետք է ճիշտ դասավորեն նախադասությունները:

Գտիր ավելորդը: Այս վարժությունը կատարելիս աշակերտները պետք է տեսականորեն կատարեն մեկնաբանում: ՈՒսուցիչը ցուցադրում է նկար-պատմություն և նկար-նախադասություններ: Աշակերտները պետք է ուշադիր դիտեն և առանձնացնեն այն նկար-նախադասությունը, որն ավելորդ է՝ միաժամանակ կատարելով մեկնաբանում:

Պատմություն-նախադասություն հասկացությունների շղթան ամրապնդելուց հետո աշակերտներին պետք է գաղափար տալ բառի մասին:Նախ բառը պետք է ընկալվի որպես նախադասության բաղադրիչ մաս, ապա՝ որպես որևէ կոնկրետ իմաստ արտահայտող առանձին լեզվական միավոր:

Նախադասություն ուսուցանելու սկզբունքով կարելի է ուսուցանել բառը, լեզվական միավորների շղթայում պարզապես պետք է ավելացնել բառը: Որպեսզի զննական և մատչելի լինի նյութի հաղորդումը, այն կարելի է սկսել նկարների և գծապատկերների ցուցադրմամբ: ՈՒսուցչուհին արտասանում է մի նախադասություն, գծում գծապատկերը, այնուհետև աշակերտներին առաջարկում է ծափերի միջոցով հաշվել թե քանի մասից է կազմված այդ նախադասությունը: Յուրաքանչյուր բառի հետ երեխաները ծափ տալով՝ ուսուցչի օգնությամբ որոշում են նախադասության մասերի թիվը և, ըստ այդմ,

նախադասության գծապատկերը բաժանում համապատասխան մասերի: Այնուհետև մաս բառը պետք է փոխարինել բառով: Պետք է նշել նաև, որ, իբրև բառ ներկայացվում է օժանդակ բառը: Գաղափար պետք է տրվի անձ և իր ցույց տվող բառերի մասին : Ստորև նշենք մի քանի վարժություններ.

Առանձնացնել անձ և իր ցույց տվող բառերը: Այս առաջադրանքը կարելի է անցկացնել նաև մրցութի սկզբուքով: Վարժությունն ապահովում է և՛ վերլուծական, և՛ համադրական աշխատանքների իրականացումը:Ուսուցիչը հանձնարարում է թեմատիկ նկարներից առանձնացնել անձ և իր ցույց տվող բառերը խմբավորել:

Մենք նախադասության բառերն ենք: Այս վարժությունը նպաստում է , որ երեխաները հասկանան, թե ինչ դեր ունեն բառերը նախադասության մեջ, և որ դրանց ճիշտ դասավորվածության դեպքում միայն նախադասությունը իմաստ կարտահայտի: Երեխաներին բաժանվում են նախադասության բառերը և հանձնարարվում, որ յուրաքանչյուրը լավ մտապահի իր բառը: երեխաները կանգնում են այնպիսի հաջորդականությամբ, որ երբ յուրաքանչյուրն իր բառն արտասանում է, դասարանը կրկնում է նախադասությունն ամբողջականությամբ: այնուհետև երեխաների տեղերը փոխվում են՝ բառերը նույնը պահելով: Նորից յուրաքանչյուրն ասում է իր բառը: Դասարանը կրկնում է և եզրակացնում, որ անիմաստ բան ստացվեց. ասվածը նախադասություն չէր:

Գունավորել՝ ըստ իմաստային դաշտի: Առաջադրանքը նպաստում է ընդհանրացման և մասնավորման աշխատանք կատարելու կարողության զարգացմանը: Ուսուցիչը բաժանում է նկար- բառերի գծապատկերներ, օրինակ՝ ուտելիք և սպասք ցույց տվող նկար-բառերի գծապատկերներ, հանձնարարելով՝ ուտելիք նկար-բառերի գծապատկերները ներկել դեղին, իսկ սպասք ցույց տվող նկար-բառերի գծապատկերները կանաչ գույնով, ներկելուց հետո այդ նկար-բառերը խմբավորել: Ի դեպ, նախաայբբենական շրջանում մենք հանդիպում ենք բառակապակցությունների, որոնց մասին պետք է ընդամենը ասել, որ այդ

առարկաների անունները երկու բառից են կազմված, այդ պատճառով էլ երկու գծապատկերով են արտահայտված (ատամի խոզանակ, ատամի մածուկ և այլն):
Նմանատիպ վարժությունները նպաստում են աշակերտների մեջ ուսումնական գործունեության կարևոր բաղադրիչների՝ սեփական գործողությունների կատարման հսկողության և վերահսկման, ինչպես նաև իր կատարած աշխատանքի գնահատման ունակությունների մշակմանը:
Այս փուլի լեզվական շղթան ամրապնդելուց հետո ուսուցչից պահանջվում է սովորեցնել վանկը: Վանկի ուսուցման ընթացքում կարելի է առաջնորդվել բառուսուցման սկզբունքով՝ և՛ նկարների, և՛ գծապատկերների ցուցադրությամբ, որը նպաստում է երեխայի կողմից նյութի հեշտ և մատչելի յուրացմանը: Նյութի ուսուցումը կարելի է սկսել զննական առարկաներով: Որպես զննական պարագա՝ կարելի է դասարան բերել զամբյուղ, որի մեջ կան, օրինակ՝ աշնանային մրգեր,այնուհետև ցուցադրում է դրանք, իսկ երեխաները անվանում են: Այդ ընթացքում ուսուցիչը աշակերտների ուշադրությունը կարող է հրավիրել բառերի երկար կամ կարճ արտասանվելու վրա: Գրատախտակին կարելի է գծել դրանց գծապատկերները, բացատրել, որ այդ բառերը կազմված են վանկից և գծել մեկ կոր գծով: Իմանալու համար, թե մյուս բառերը քանի անգամից են արտասանվում, անհրաժեշտ է ձեռքն ափն ի վար դնել ծնոտի տակ: Բառն արտասանելու ժամանակ քանի անգամ որ ծնոտը հպվում է ձեռքին , ուրեմն՝ բառն այդքան վանկ ունի: Բառի մեջ վանկի քանակը կարելի է որոշել ծափով՝ մեկ վանկն արտասանելով մեկ շնչով: Այնուհետև գաղափար տալ միավանկ և բազմավանկ բառերի մասին :
80-ական թվականներին վանկի մասին տրվելիք հասկացությունը մատչելի դարձնելու համար Ա. Բահաթրյանն օգտագործել է վանկային կորերը , որոնք այսօր էլ հաջողությամբ կարող են գործադրվել ՝ ցույց տալու համար բառի մեջ եղած վանկերի քանակը: Դրան զուգընթաց օգտագործվում են նաև նախադասության, բառի ու վանկի գծային մոդելները, որոնք նույնպես օգնում են այդ հասկացությունների յուրացմանը՝ մանավանդ նախաայբբենական շրջանում,

երբ բառի գրաֆիկական ձևը դեռևս չկա և կորերը պետք է օգտագործվեն մոդելների հետ: Վանկի ուսուցումը նույնպես կարելի է սկսել զննական պարագաներով: Առարկաները ցուցադրվում են , իսկ երեխաները անվանում են դրանք: Իմանալու համար , թե այդ բառերը քանի անգամից են արտասանվում, անհրաժեշտ է ձեռքն ափն ի վար դնել ծնոտի տակ, բառերն արտասանելու ժամանակ քանի անգամ որ ծնոտը հպվեց ձեռքին, ուրեմն բառն այդքան վանկ ունի:Սրանից հետո երեխաները կարող են հեշտությամբ հաշվել բառի մեջ վանկերի քանակը:

Կարելի է ցուցադրել նկար-բառերի գծապատկերներ, դրանք ենթարկել վանկային վերլուծության , ըստ վանկային կորերի քանակի՝ որոշել այդ բառերի միավանկ կամ բազմավանկ լինելը: Առաջարկվում է հետևյալ խաղերի շարքը:

Գտնել ավելորդը: Այս առաջադրանքը զարգացնում է երեխաների տրամաբանական մտածողությունը և աշակերտներին մղում մասնավորից դեպի ընդհանուրը գնալուն, տվյալ իմաստային դաշտի **ավելորդ** բառերը գտնելուն: ՈՒսուցիչը հանձնարարում է նկար-բառերից առանձնացնել այն բառերը, որոնք, օրինակ, միրգ չեն, այնուհետև դրանք խմբավորել ըստ վանկերի քանակի:

Ով շատ կկախի: Երեխաներից պահանջում է ուշադրության կենտրոնացում: Անհրաժեշտ է ունենալ մի **ծառ** և ստվարաթղթից պատրաստված մրգեր՝ երկու գույնի ժապավեններով (երկու խումբ երեխաների համար) : ՈՒսուցիչը ցույց է տալիս միրգը, ամբողջ շարքը, անվանում է բառը, որոշում են վանկերի քանակը և ճիշտ պատասխանի դեպքում միրգը կախում են ծառից : Ժապավենի գույնով որոշվում է , թե որ շարքն ավելի ճիշտ պատասխաններ տվեց:

Խաղանք քարտերով: Այս խաղը իրենից ներկայացնում է վերլուծական աշխատանք: Քարտերի վրա պետք է պատկերված լինեն գրենական պիտույքներ և դասարանական կահավորանքի առարկաներ: Գրատախտակին փակցվում է նկար-բառը և կազմվում է նրա վանկային գծապատկերը: Կարելի է օգտագործել գունավոր կավիճներ կամ ունենալ մեկ վանկին համապատասխանող վանկային

պատրաստի մոդելներ և կախված այն բանից, թե բառը քանի վանկ ունի, վանկային այդքան մոդել փակցնել գրատախտակին:

Պակասող վանկը: ՈՒսուցիչը կամ աշակերտներից մեկն ասում է երկվանկ կամ եռավանկ բառ, իսկ խաղընկերը լրացնում է մյուս մասը և ստանում բառ: Եթե խաղընկերը կարողանում է այդ անել, ապա խաղը նրա հետ շարունակվում է մինչև ուսուցչի կողմից նրան փոխելը, իսկ եթե չի կարողանում անմիջապես ամբողջացնել բառը , խաղից դուրս է մնում և նրան փոխարինում է հաջորդ խաղացողը:

Քանի՞ վանկ եմ: ՈՒսուցիչը կամ աշակերտներից մեկը ՝ խաղավարը , գնդակը նետում է շրջանով կանգնած երեխաներից մեկին և ասում է որևէ բառ, իսկ գնդակը բռնողը պետք է կարողանա այն վանկերի բաժանել:Եթե չի կարողանում առաջադրանքը ճիշտ կատարել, խաղից դուրս է մնում , և գնդակը նետում է մեկ ուրիշի:

Որ առարկան չկա: Զարգացնում է հիշողությունը և բառի մեջ վանկեր հաշվելու կարողությունը: Սեղանին դրվում են ծանոթ առարկաներ կամ խաղալիքներ:Աշակերտներից մեկը հրավիրվում է ուսուցչի սեղանի մոտ , նրան առաջարկվում է ուշադիր դիտել սեղանի վրա դրված առարկաները: ՈՒսուցիչն աշակերտներին հայտնում է , որ նրա՝ դասարանից դուրսգալուց հետո պիտի պահի առարկաներից մեկը: Ինքը պիտի գտնի բացակայող առարկան և հաշվի այդ բառի վանկերի քանակը:

Այս փուլից հետո պետք է գաղափար տալ հնչյունի մասին: Կարելի է գրատախտակին գծել միավանկ բառի գծապատկերներ, որոնք լինեն քանակով տարբեր: ՈՒսուցչի այն հարցին, թե ինչու՞ են գծապատկերները տարբեր, չէ՞ որ դրանք արտասանվեցին մեկ ծափով: Որպես կանոն, այս հարցին երեխաները չեն պատասխանում: ՈՒսուցիչը բացատրում է, որ բառերի երկար կամ կարճ լինելը կապված է բառի մեջ հնչող ձայների թվից: Լեզվական տեսակետից սա լուրջ նորություն է երեխաների համար. Գաղափար է տրվում այն մասին, որ բառը վանկերի բաժանվելուց զատ՝ բաժանվում է նաև հնչյունների, որ յուրաքանչյուր

վանկ մեկ կամ մի քանի հնչյունների միացություն է :Տրված նոր հասկացությունն անհրա-եշտ է ամրապնդել բառերի գծապատկերի ր կիսատ կամ թերի գծապատկերները լրացնելու-ամբողջացնելու ուղղությամբ տարվելիք վարժությունների միջոցով:Սա ամենադժվարին աշխատանքներից մեկն է որն առաջադրվում է երեխաներին. Բառի մեջ հնչյուն լսելը հնչյունային զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքի առաջին աստիճանն է: Այն պետք է կատարվի անընդհատ, ըստ որում՝ պետք է կատարվի ոչ միայն մինչև նախապայբբենական փուլի վերջը, այլև ամբողջ գրուսուցման փուլում: Որպեսզի ձանձրալի չլինի, այդ աշխատանքը անհրաժեշտ է իրականացնել տարբեր խաղային իրավիճակներում:

Ո՞ր նկարներն են սկսվում նույն հնչյունով: Սովորողները նախ հնչյունային վերլուծության են ենթարկում նկար-բառերը, ապա նշում միևնույն հնչյունով սկսվող նկար-բառերը:

Նույն հնչյունով սկսվող և վերջացող բառեր: Առաջադրանքը նպաստում է հնչյունային լսողության զարգացմանը, միևնույն հնչյունը բառասկզբում և բառավերջում լսելու կարողությունների զարգացմանը:

Մեկ հնչյունով տարբերվող բառեր: Նկար-բառերը հնչյունային վերլուծության ենթարկելով՝ սովորողները նշում են նկար-բառերի զույգը, որոնք միմյանցից տարբերվում են մեկ հնչյունով:

Այս ամենից հետո պետք է ընդհանրացնել, որ լեզվի հնչյունները բաժանվում են երկու խմբի՝ ձայնավորներ և բաղաձայններ: Այս հնչյունները տարբերակելու համար ուսուցումը պետք է սկսել գործնական ճահապարհով: Երեխաները հնչյունները արտասանելուց հայտնաբերում են, որ բաղաձայնները արտասանվում են կարճ և լսվում է ը , իսկ ձայնավորներն արտասանվում են երկար:

Առաջադրել հետյևալ վարժությունները.

Գտնել ձայնավորով սկսվող բառերը: Առաջադրանքը նպաստում է արտասանության միջոցով ձայնավոր հնչյունների տարբերակաման կարողության ձևավորմանը:

Գտնել բաղաձայնով սկսվող բառերը: Այս վարժությունը բնույթով նույնն է, ինչ

նախորդը, պարզապես այստեղ արտասանության միջոցով պետք է տարբերակվեն բաղաձայն հնրյունները:

Գտնել ավելորդը: Սովորողները հաշվում են նկար-բառերի հնչյունների քանակը և նշում այն միակ նկար-բառերի զույգը, որոնք միմյանցից տարբերվում են մեկ հնչյունով: Այս աշխատանքներից հետո երեխաները պիտի ձևակերպեն եզրակացություններ՝ ոչ սահմանման ձևով:

Եզրակացություն: Լեզվի բոլոր հնչյունները բաժանվում են երկու խմբի. մի խմբի հնչյուններն արտասանվում են երկար և լսում ենք միևնույն հնչյունը: Դրանք ձայանավորներն են, այսինքն՝ ձայն ունեցող հնչյունները, ,իսկ մյուս խմբի մեջ մտնողները կարճ են արտասանվում, շարունակվում են ը-ով: Դրանք բաղաձայններն են:

Լեզվական նախագիտելիքներն, անշուշտ, դյուրին չէ յուրացնելը, և ուսուցչից պահանջվում է համբերատար, մանրակրկիտ, երկարատև աշխատանք, որը հող է նախապատրաստում գրաճանաչության շրջանի կազմակերպման համար և, որ ամենակարևորն է, ապահովում է գիտակցաբար և հասկանալով կարդալու կարողության ձևավորման հիմք:

ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Ցանկացած դասարան կազմավորվում է ըստ աշակերտների տարիքի: Սակայն այդ երեխաների միևնույն տարիքային խմբում լինելը դեռևս չի ենթադրում զարգացման ու պատրաստակամության միևնույն մակարդակներ: Այս դեպքում ուսուցիչը հիմնականում ուսուցումն իրականացնում է՝ հենվելով միջին կարողություններ ունեցող աշակերտների վրա:

Հաշվի առնելով առանձին աշակերտների միջև առկա տարբերությունները ուսուցիչը դժվարանում է խմբերն առանձնացնել:

Դրանք պայմանավորված են մի շարք հանգամանքներով՝

1. Թե ինչպիսի ընտանիքից է տվյալ երեխան

2. Ճանաչողական կարողությունների տարբերությունները՝

- ընկալումը
- կենտրոնացած ուշադրության տևողությունը
- հիշողությունը

3. Մտածողությունն ու լեզուն՝

- լեզվական-խոսակցական
- տրամաբանական-մաթեմատիկական
- տեսողական
- շարժողական
- երաժշտական
- միջանձնային
- ներանձնային

Տարբեր բնավորության աշակերտներ ունեն տարբեր՝

- սովորելու ոճ
- մղում(դրդապատճառ)
- վերաբերմունք

 հետաքրքրություններ

 ուղղի կիսագնդերի գերակայություն

 սեռ

Մերօրյա մանկավարժը պետք է մոտեցումներ ու եղանակներ կիրառի: Շերտավորված ուսուցման հիմքում ընկած է անհատական մոտեցման սկզբունքը:Շերտավորված ուսուցումն ուսումնադաստիարակչական ճկուն գործընթաց է: Այդ գործընթացի իրականացման ժամանակ ուսուցիչը ոչ թե աշակերտին է հարմարեցնում ուսումնական նյութին,այլ ուսումնական նյութը մշակում դարձնում է մատչելի:

Անհրաժեշտ է, որ յուրաքանչյուր աշակերտ ուսումնական գործընթացում զբաղված լինի իր ընդունակություններին համապատասխան աշխատանքով:

Շերտավորված ուսուցումն ունի և՛ իր դրական, և՛ իր բացասական կողմերը:

Դրականներից են՝

 Ուժեղ սովորողները հանարավորություն են ունենում իրենց զարգացման մեջ առաջընթաց ապրել:

 Ուժեղ սովորողները ավելի ինքնուրույն են դառնում:

 Հնարավորություն է ստեղծվում ուշադրություն դարձնել հետ մնացողներին:

 Բարձրացնում ե թույլ աշակերտների ինքնագնահատականը:

Բացասական կողմերից են՝

 Թույլերը հնարավորություն չեն ունենում հասնել ուժեղներին:

 Թույլ խմբերում նվազում է ուսման շարժառիթը:

Շերտավորման երկու տեսակը:

1.Արտաքին՝ հատուկ դասարաններ, որտեղ ընդգրկվում են որոշակի անհատական ընդունակություններով օժտված աշակերտներ:

2.Ներքին:

Շերտավորված ուսուցման փուլերը՝

 Խմբերի առանձնացում:

 Սովորողների՝ նույնանման կարիք ունեցող խմբերի ստեղծում՝ըստ հայտորոշման արդյունքների:

 Շերտավորված առաջադրանքի մշակում:

 Հայտորոշիչ ստուգում,որի արդյունքում կարող է փոխվել խմբի կազմը:

Շերտավեր մոտեցումը հետապնդում է հետևյալ նպատակները:

1.Ուսուցողական նպատակ

2.Զարգացնող նապատակ

3.Դաստիարակչական նպատակ

Ուսուցիչը պետք է՝

ա) Ուսումնասիրի և իմանա աշակերտների մակարդակները:

բ) Կանխատեսի դժվարությունները,որոնք կարող են երեխայի մոտ ի հայտ գալ:

գ) Դասերի ընթացքում կիրառի անհատական և խմբային առաջադրանքներ:

դ) Նկատի և խրախուսի աշակերտների մի խմբից անցումը մյուս խումբ:

Աշխատանքը ավելի ակնառու դարձնելու համար ներկայացնում են աշակերտների հետևյալ խմբերը՝

 Առաջին խումբ (35-40%) այն աշակերտները,որոնք դժվարությամբ են յուրացնում ծրագրային նյութը:

 Երկրորդ խումբ (30-35%) այն աշակերտներն են,որոնք չհաշված որոշ դժվարություններ՝ դասի պրոցեսի ընթացքում ունենում են բավականին հաջողություններ:

 Երրորդ խումբ (15-20%) այն աշակերտներն են,որոնք ուսուցման ժամանակ լավ ըմբռնում են ծրագրային նյութը:

 Չորրորդ խումբը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտներն են:

Շերտավորված ուսուցման ժամանակ որոշակիացվում է տեղեկույթի ընկալման մակարդակները՝

 Հասկացա,մտապահեցի,վերարտադրեցի(նվազագույն)

 Յուրացրել է և կիրառում է(միջին)

 Յուրացրել է և կիրառում է ոչ ստանդարտ իրավիճակներում (բարձր մակարդակ):

Առանձնահատկությունները՝

ա) Անցկացնել բազմատարր խմբերում

բ) Ձևավորել սովորելու հմտություն

Ուսումնական գործընթացը կարելի է շերտավորել՝

1.Ըստ ուսումնական առաջադրանքների բովանդակության

2.Ըստ ուսումնական գործընթացի կազմակերպման

Շերտավորումը կարող է լինել՝

ա) անհատական բ) զույգերով գ) խմբային

Փորձարարական հետազոտություն

.Խմբի նկարագիրը

Ես իմ հետազոտական աշխատանքը անցկացրել եմ Գեղարքունիքի մարզի Զոլաքարի 2 միջնակարգ դպրոցի 2-րդ բ դասարանում, քանի որ այս դասարանում սովորողների մի մասը չի ներգրավվում դասապրոցեսին:Այդ իսկ պատճառով ես որոշեցի այդ աշակերտների նկատմամբ կիրառել անհատական տարբերակված ուսուցում, ինչը կնպաստի նաև զարգացնել նրանց մոտ տեքստերի հետ ճիշտ աշխատելու հմտությունները, դառնալ ավելի ինքնուրույն և հետ չմնալ ուսումնական ծրագրերից:

Այս դասարանում սովորում են 21 աշակերտ՝ 10 աղջիկ և 11 տղա, որոնք ունեն տարբեր առաջադիություն և հմտություններ: Այս դասարանում ես երկրորդ տարին եմ դասավանդում և լավ գիտեմ յուրաքանչյուր աշակերտի հմտությունն ու կարողությունը: Դասարանի հիմնական խնդիրն է աշակերտների ներգրավվածությունը դասապրոցեսին, ինչը պատճառ դարձավ, որ ես իմ հետազոտական աշխատանքը իրականացնեմ միջին կարողությունների տեր 6 աշակերտների համար կազմակերպել տարբերակված ուսուցում անհատական նախադասությունների միջոցով, իսկ մնացած աշակերտների հետ կկատարենք տարբեր բնույթի աշխատանքներ՝ հաշվի առնելով յուրաքանչյուրի կարողությունները և հմտությունները:

Փորձարարական դաս-1

Այսօրվա դասը մայրենիից էր: Դասի թեման Սուրեն Մուրադյանի <<Խաղաղության դաս>> թեման էր: Դասաժամն սկսվեց տնային աշխատանքի ստուգումով, բոլորը ներկայացրին իրենց տնային աշխատանքները՝ որոշակի սխալներով: Քննարկվեց տնային աշխատանքի սխալները, տրվեց բանավոր հետադարձ կապ:

Հարցադրումներով սկսվեց դասը:Ամփոփեցինք թեման, որպեսզի ստուգվեին աշակերտների ձեռք բերած գիտելիքները անցած թեմայի վերաբերյալ: Աշակերտները պատասխանեցին առաջադրված հարցադրումներին իմ ուղղորդող հարցերի օգնությամբ, այնուհետև գրատախտակը բաժանվեց 4 մասի: Գրատախտակին գրվեցին տարբեր նախադասություններ և 4 աշակերտները սկսեցին աշխատել գրատախտակի մոտ,՝գտնելով՝ առարկա, գործողությն, հատկանիշ ցույց տվող բառերը: Մնացած աշակերտները աշխատում էին իրենց տետրերում՝ հնչեցնելով իրենց համար անհասկանալի հարցերը: Թեստեր բաժանվեցին աշակերտներին՝ անհատապես աշխատելու համար: Մնացած աշակերտների հետ դասը շարունակվեց առաջադրանքներ կատարելով: Բարձր առաջադիմության ունեցող աշակերտները դասագրքից գրեցին 5-րդ վարժությունը, իսկ ցածր առաջադիմության ունեցող աշակերտները աշխատեցին դասագրքի վերջում գրված 2 նախադասությունների հետ, այդ

նախադասությունները գրեցին տետրեում: Աշխատանքների իրականացման ժամանակ բոլոր աշակերտներին տրվեցին ուղղորդումներ, նաև բանավոր հետադարձ կապ: Իմ ուշադրության կենտրոնում մնացել էին հիմնականում ցածր առաջադիմություն ունեցող աշակերտները, քանի որ նրանք հետ են մնում ուսումնական ծրագրերից:

Գրեցինք տարբերակված թեստային առաջադրանքներ: Յուրաքանչյուր աշակերտի, հաջորդ դասին կտրամադրվի գրավոր և բանավոր հետադարձ կապ անելիքների և կատարած գործողությունների վերաբերյալ:

Տարբերակված թեստերը հավաքելուց հետո հաղորդվեց նոր թեման: Նոր դասը հաղորդվեց աշակերտներին կարճ դասախոսությամբ՝ ստեղծելով միջառարկայական կապ <Ես և շրջակա աշխարհը> առարկայի հետ: Դասի հաղորդման ժամանակ աշակերտները հնչեցրին իրենց համար անհասկանալի հարցերը, տրվեց լրացուցիչ բացատրություններ:

Դասն ավարտվեց տնային աշխատանքի հանձնարարումով՝ 1 վարժություն ցածր առաջադիմություն ունեցող աշակերտների համար, և 1 վարժություն միջին և բարձր առաջադիմություն ունեցող աշակերտների համար: Այս դաս ներկայացրել եմ<<դասապլան-1-ում>>:

Փորձարարական դաս-2

Այսօրվա դասը մայրենիից էր: Դասի թեման էր <<**Հայոց բանակը**>>: Թեման բավականին մատչելի էր և հեշտ ընկալվող այդ իսկ պատճառով թեման ամբողջովին հաղորդվեց աշակերտների մասնակցությամբ: Նոր դասը սկսվեց տնային աշխատանքի ստուգումով, ինչին հաջորդեց նախորդ դասաժամին գրված տարբերակված թեստերի քննարկում:

Տարբերակված թեստային աշխատանք գրող 2 աշակերտ կարողացել էին հաղթահարել թեստի միայն մի վարժությունը սխալներով, իսկ 4 աշակերտ թեստը գրել էին ամբողջությամբ, բայց դարձյալ սխալներով: Դասի ընթացքում բացատրվեց բոլոր սխալները, տրվեց լրացուցիչ բացատրություն ինչպես իմ, այնպես էլ մի քանի բարձր առաջադիմություն ունեցող աշակերտների կողմից: Աշակերտները նշեցին, որ այս ոճի դասի անցկացումը իրենց դուր եկավ, քանի որ այսպիսի դասերը ավելի արդյունավետ են, քանի որ ստանում են ինչպես նոր գիտելիք, այնպես էլ ամբողջ դասարանն է մասնակցում դասապրոցեսին՝ ապահովելով ամբողջ դասարանի ներգրավվածությունը: Թեստերն հանձնելուց աշակերտները դժգոհեցին , որ այսպիսի աշխատանքի համար նախատեսված ժամանակը մի փոքր քիչ էր:

Այս ամենից հետո հաղորդվեց նոր դասը, որը վերաբերվում է**<<Հայոց բանակին>>:** Թեման լինելով բավականի մատչելի՝ այն հաղորդվեց հարցադրումների մեթոդով, ինչը ևս հնարավորություն տվեց ինձ ներգրավվել գրեթե բոլոր աշակերտներին դասապրոցեսի մեջ: Թեման ամրապնդելու, ինչպես նաև ամփոփելու նպատակով դարձյալ 8 միջին առաջադիմություն ունեցող աշակերտների բաժանվեց 2 տարբերակով տարբերակված թեստեր, բարձր առաջադիմություն ունեցող աշակերտների հետ գրվեց 2 բարդ վարժություններ,

իսկ ցածր առաջադիմություն ունեցող աշակերտների համար գրատախտակին գրվեց տարբեր նախադասություններ, որոնք գրվեցին նաև տետրերում: Թեման ամփոփելու համար յուրաքանչյուր աշակերտ կազմեց 1 նախադասություն իր իսկ կողմից ընտրված բառով, իր կարողությանը համապատասխան: Հավաքվեցին թեստերը, հանձնարարվեց տնային աշխատանք:

Վերլուծություն

Աշակերտների ներգրավվածությունը ապահովելու համար՝ անցկացվեց 2 տարբերակված դասեր, որի ժամանակ 6 միջին առաջադիմության ունեցող աշակերտներ կատարեցին անհատական տարբերակված թեստային առաջադրանքներ՝ 2 տարբերակներով: Ամեն հաջորդ տարբերակված դասաժամին ամբողջ դասարանի համար քննարկվեց տարբերակված թեսթերի սխալները, տրամադրվեց բանավոր և գրավոր հետադարձ կապ: Իմ ուշադրության կենտրոնում եմ պահել հիմնականում միջին և ցածր առաջադիմություն ունեցող աշակերտներին, որն էլ պատճառ հանդիսացավ նրանց ներգրավվածությանը դասապրոցեսին, ինչպես նաև նրանց հնարավորություն տրվեց ձեռք բերել ինքնուրույ աշխատելու հմտություն (ցածր կարողության տեր աշակերտներին նաև աշխատանք բառարանի հետ):
Աշակերտները խոստովանեցին, որ բանավոր տրամադրված հետադարձ կապը ավելի արդյունավետ է:
Դասվարը պետք է խոր և կայուն գիտելիքներ տա աշակերտներին մայրենի լեզվից, նրաց մեջ ներարկի մեր լեզվի ողջ գեղեցկությունը, ուժն ու նրբությունը:
Ամեն մի աշակերտ, անկախ հակումներից, պետք է խորապես տիրապետի մայրենի լեզվին, սովորի ճիշտ, հստակ շարադրել իր մտքերը:
Դասվարը դասերը հիմնականում պետք է կազմակերպի քննարկումների, խաղ-մրցույթների, բանավեճերի, վիկտորինաների միջոցով, որոնք է՛լ ավելի հետաքրքիր են դարձնում առարկայի թեմաները: Նա ամեն դասին պետք է հնարի նոր վարժություն, նոր առաջադրանք, ուսումնական խաղեր, որ ուսուցանվող նյութն ամեն անգամ նորություն լինի աշակերտի համար, ինչպես նաև յուրաքանչյուր դաս պետք է հագեցած լինի ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներով՝ համակարգիչ, էլեկտրոնային գրատախտակ, որոնք հնարավորություն են ընձեռնում աշակերտներին կատարելագործելու ուսումնառության գործընթացը:

ԴԱՍԻ ՊԼԱՆ

Ուսուցիչ՝ Լուսինե Վարդանյան

Առարկա՝	Մայրենի	*Ամսաթիվ ……*	Կիսամյակ	1	Դասարան	2
Թեմա՝	Սուրեն Մուրադյան-Խաղաղության դաս Առարկա,գործողություն, հատկանիշ ցույց տվող բառեր					
Օգտագործվող նյութեր՝	դասագիրք,խաղաղության խորհրդանշաններ,նկարներ,քարտեր,տետրեր,մատիտներ,թղթե,երաժշտություն,տեսանյութ					
Դասի նպատակը՝	Աշակերտները գաղափար կկազմեն, թե ինչ է խաղաղությունը, կսովորեն և կծանոթանան խաղաղության խորհրդանշանների հետ, կսովորեն այդ բառի հոմանիշները, բացատրությունը: Կկարողանան տարբերակել առարկա, գործողություն, հատկանիշ ցույց տվող բառերը: Կկազմեն նախադասություններ այդ բառերով: Կսովորեն ասույթներ խաղաղության մասին:Կկարողանան արտահայտիչ կարդալ և կարդացածը վերլուծել					
Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ						
Վերջնարդյունքներները	Կիմանան ասույթներ խաղաղության մասին, ոտարնավորը կսովորեն անգիր, կծանոթանան Պիկասոյի (խաղաղության աղավնի) կտավին:					
Գործողություններ (ժամ/տևողություն)	Ուսումնական գործունեություն Աշակերտնեա	Ուսումնական գործունեություն Ուսուցիչ	Հարցադրումներ	Կիրառվող մեթոդ (ներ)		

Առարկա՝	Մայրենի	*Ամսաթիվ ……*	Կիսամյակ	1	Դասարան	2
5րոպե_սկիզբ 10րոպե-ընթացք 15րոպե 12րոպե	*Բացել դասագրքերը, պատրաստվել նոր դասին: Ներկայացնել տնային աշխատանքները Պատասխանել հարցերին Փոխադարձ հարցեր տալ, փակ հարցերին պատասխանում են ,,ցածր,, առաջադիմություն ունեցող աշակերտները՝ ստեղծելով ,,հավելյար,, արժեքներ 4 աշակերտ կատարում են առաջադրանքները*	Ողջունել դասարանին, ն/բ: Ստուգել տնային աշխատանքները, բացատրել անհասկանալի մասերը Տալ հարցադրումներ, աշակերտներին ներգրավել դասապրոցեսին Տալ ուղղորդող հարցադրումներ Գրատախտակը բաժանել 4 մասի, գրել տարբեր նախադասություններ, առաջարկելով ընդգծել առարկա, գործողություն, հատկանիշ ցույց տվող բառերը: Հետևել կատարվող աշխատանքներին, կատարել շտկումներ Բաժանել թեստերը,	ինչ գիտեի: Ինչ սովորեցի: Ինչ տեսա: Ինչ լսեցի:	Զրույց, մտագրոհ,քառաբաժան, խաղային մեթոդներ		

Առարկա՝	Մայրենի	*Ամսաթիվ ……*	Կիսամյակ	1	Դասարան	2
	գրատախտակին, մյուսները կատարում են նշումներ տետրերում	բացատրել հանձնարարությունները Հետևել կատարվող աշխատանքներին, տրամադրել անհրաժեշտության դեպքում առաջ մղող անհատական բանվոր, գրավոր հետադարձ կապ: Հավաքել տարբերակված թեստերը Նոր թեմայի հաղորդում, բանավոր հետադարձ կապի տրամադրում, անհասկանալի հատվածների բացատրություն				
տնային աշխատանք 3ր	*Գնահատում և տնային աշխատանքի հանձնարարում*					

Տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ՝
Նորիկ Մխիթարյան_____

ԴԱՍԻ ՊԼԱՆ_2

Ուսուցիչ՝ Լուսինե Վարդանյան

Առարկա՝	Մաթեմատիկա	Կիսամյակ	1	Կիսամյակ	2	Դասարան	1
Թեմա՝	Համեմատում 20-ի սահմաններում						
Օգտագործվող նյութեր՝	Գրատախտակ, կավիճ, գիրք, տետր, մատիտներ, հաշվեձողիկներ, եռանկյունիներ, +, -, <, > նշաններ , տարբեր դիդակտիկ նյութեր, թվային քարտեր, քանոն						
Դասի նպատակը՝	Կարողանալ հաշվել 20-ի սահմաններում, կարողանալ տարբեր թվաբանական գործողություններ կատարել+,-,>< շաննար տեղադրել համապատասխան վայրերում:						
Ուսուցման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ							
Վերջնարդյունքները	Իմաստի ընկալման փուլում դիդակտիկ պարագաների միջոցով կազմել անհավասարություններ և գրել գրատախտակին, այնուհետև բացատրել և քանոնի օգնությամբ կատարել համեմատում: Երեխաների գիտակցությանը հասցնել այն գաղափարը, որ որքան ավելի աջ է գտնվում քանոնի վրա թիվը, ուրեմն այնքան մեծ է: Լուծել N 3 խնդիրը: Ընթերցել խնդրի պայմանը և պահանջը,ասել, թե ո՞րն է անհայտ կամ հայտնի, ճշտել աշակերտների կողմից, համառոտագրել: Կատարե առաջադրանք 4-ը՝ գերազանցիկներին հանձնարարել ինքնուրույն, և շուտ վերջացնելու դեպքում խրախուսել, իսկ միջին և թույլ ընդունակություն ունեցողներին հետ գրել գրատախտակին՝ մեկնաբանելով:						
Գործողություններ ժամ/տևողություն	Ուսումնական գործունեություն Աշակերտներ	Ուսումնական գործունեություն Ուսուցիչ	Հարցադրումներ	Կիրառվող մեթոդներ			

5рոպե_սկիզբ 10рոպե-ընթացք 25рոպե	Կշռադատման փուլում հանձնարարել խմբային աշխատանք զույգերով՝ տալով հետևյալ առաջադրանքը՝ ավելացրու 1 հաշվեձողիկ այնպես որ ստացվի 3 եռանկյուն [ ]: Ստուգել աշխատանքները, խրախուսել շուտ վերջացնող աշակերտների:	Ողջունել դասարանին, ն/բ: Ստուգել տնային աշխատանքները, բացատրել անհասկանալի մասերը Տալ հարցադրումներ, աշակերտներին ներգրավել դասապրոցեսին Տալ ուղղորդող հարցադրումներ Կատարել բանավոր հարցում 20-ի սահմանում՝ քարտային աշխատանքի միջոցով:Քարտերի վրա գրված են թվեր, ուսուցչի հանձնարարությամբ աշակերտնե	1 Ի՞նչ է մեզ հայտնի 2 Ի՞նչ է անհայտ, ի՞նչ է պահանջում գտնել 3 Ո՞րն է հուշող բանալին 4 Ի՞նչ գործողություն պետք է անել	Զրույց, մտագրոհ, քառաբաժան,

		ը պետք է թվերը դասավորեն աճման կամ նվազման կարգով՝ նշված թվային տիրույթում: Այնուհետև ավելացնելով >,< կամ =նշանները՝ հանձնարարել այնպես տեղադրել, որ ստացվի անհավասարություն, իսկ հետո հավասարություն		
Տնային աշխատանք 5ր	Գնահատում և տնային աշխատանքի հանձնարարում			

Տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ՝
Նորիկ Մխիթարյան……....